ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

330 ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287830 (0285) 23890, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,, 25,, մայիսի 2015թ. № 66-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԻՏՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, << Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 23-րդ հոդվածով, 54-րդ հոդվածի 3-րդ մասով, 244^9 –րդ և 305-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնի կողմից 27. 04. 2015թ. կազմված վարչական իրավախախտման թիվ 6 արձանագրության, **որոշում եմ՝**

1.Համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողամասի հողատեսքի ինքնակամ փոփոխությունը չկանխելու համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղիտու գյուղական համայնքի ղեկավար Ավետիս Ավետիսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ կիրառելով <<տուգանք>> վարչական տույժը՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի չափով:

2. Վարչական իրավախախտման համար կիրառված տուգանքը 15-օրյա ժամկետում ենթակա է մուտքագրման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 900005240461 հաշվեհամարին:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ□ մայիսի 25

ք□Կապան